ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԻՆՎԱԾ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ (4–5-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ) ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ*

Ա. Ա. ՄԻՆԱՍՅԱՆ, պահեստազորի փոխգնդապետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմահումանիտար գիտությունների հետազոտությունների կենտրոնի պետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի վաղմիջնադարյան և ավելի վաղ շրջանների պատմության առանցքային իրադարձությունների, ռազմական բախումների ընթացքում հայրենասիրության դրսևորումների, հայոց թագավորների, իշխանների և հոգևոր առաջնորդների հայրենաշահ ու հայրենանվեր ձեռնարկումների վերաբերյալ որոշակի տեղեկություններ կարելի է քաղել 4–5-րդ դդ. հայ պատմիչների, փիլիսոփաների, եկեղեցական գործիչների մեզ հասած աշխատություններից: Լինելով քրիստոնեական դավանաբանական ուսմունքի հմուտ գիտակներ և քարոզիչներ՝ նրանք, բնականաբար, քաղաքական, ռազմական և մշակութային իրադարձությունները ներկայացնում և մեկնաբանում են քրիստոնեական գաղափարախոսության ոգով: Նրանց երկերի վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու հայրենասիրության գաղափարի ընկալումը և ըմբռնման առանձնահատկությունները Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունման, հայ գրերի գյուտի և պետության անկման բեկումնային իրադարձությունների ժամանակաշրջանում:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ 4–5-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Պատմահայր Մովսես Խորենացին (մոտ 410–490 թթ.) խիստ կարևորում է պատմության (անշուշտ՝ նաև հայոց պատմության) վավերագրումը: Ընդսմին նա առաջնորդվում է ոչ միայն պատմական անցքերի և իրադարձությունների հավաստի գրավոր արձանագրման անհրաժեշտությամբ, այլև այն մտայնությամբ, որ «մենք էլ նրանց (պատմագիրների,– *Ա. Մ.*) շարադրած գրվածքները կարդալիս *աշխարհական կարգերի գիտություն ենք ձեռք բերում և քաղաքական կարգեր ենք սովորում* (ընդգծումը մերն է,– *Ա. Մ.*)»[1],

---

* Հոդվածն ստացվել է 19.05.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 29.07.2023:

[1] *Մովսես Խորենացի,* Հայոց պատմություն: Թարգմանություն, ներածություն և ծանո-

այսինքն՝ հասարակական և քաղաքական կարգերի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու տեսանկյունից: Ուստի հեղինակը նպատակադրվում է իր այս աշխատասիրությամբ ինչ-որ չափով լրացնելու հայոց պատմության գրավոր արձանագրման գործում եղած բացթողումը*, քանի որ համոզված է, որ «մեր երկրումն էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել»[2]:

Իր նշանավոր «Հայոց պատմության» ստեղծմամբ Խորենացին, սակայն, զուտ պատմագիտական խնդիր չէր լուծում, նրա նպատակը ռազմավարական էր և հեռահար. ստեղծել հայ ժողովրդի ծագման և անցած ուղու վերաբերյալ այնպիսի կուռ, ամբողջական, տարաբնույթ սկզբնաղբյուրների լայն ընդգրկում ունեցող, հավաստիության և գիտական անաչառության առումով անխոցելի հայեցակարգ, որը հայ ժողովրդի համար կդառնար ազգային ինքնության պահպանման հիմք, անկախ պետականության վերականգնման մի յուրատեսակ «հավաստագիր»: «Նրա հայեցակարգի հիմնարար գաղափարը հետևյալն է. Հայաստանը, բաժանված լինելով Արևելահռոմեական կայսրության (Բյուզանդիա) և Պարսից տերության միջև, իր վաղեմիությամբ չի զիջում իրեն զավթած երկրների պատմությանը, որ հայկական պետականությունը (թագավորությունը) ստեղծվել է առաջին պետությունների հետ, իսկ հայ ժողովուրդը աշխարհի հնագույն քաղաքակիրթ ժողովուրդների հասակակիցն է»[3]: Ուստի Խորենացու «Պատմությունը» կոչված էր ժամանակաշրջանի դժվարին աշխարհաքաղաքական պայմաններում խորացնելու հայ ժողովրդի և նրա աշխարհիկ ու հոգևոր վերնախավի ազգային գիտակցությունն ու բարձրացնելու հայրենասիրական ոգին, ստեղծելու իրավաքաղաքական, կրոնագաղափարախոսական, բարոյահոգեբանական ծանրակշիռ հիմնավորումներ՝ ազգային-ազատագրական պայքարի արդարացվածության, հայոց պետականության վերականգնման վաղնջական իրավունքի համար:

Հետևողականորեն ձգտելով այս նպատակին՝ Խորենացին ոչ միայն ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը սերում է հինկտակարանային նախահայրերից, այլև վառ գույներով ներկայացնում է հին հայկական առաջին առաջ-

թագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի: Ե., 1961, էջ 82: Պատմության վավերագրումը Խորենացին հասկանում է բավական լայն իմաստով՝ վավերագրերի շարքը դասելով «գիտական ճառեր և պատմական գրվածքներ, ինչպես ունեն քաղդեացիները և ասորեստանցիները, եգիպտացիները և հելլենացիները», ինչպես նաև դիվանների մատենագրություններ, թագավորների իմաստության գործերն ու քաջությունն արձանագրող վեպեր ու պատմություններ, այլ «գրություններ, գյուղերի ու գավառների և յուրաքանչյուր տների սեփականության, ընդհանուր վեճերի ու դաշինքների, մանավանդ սեպուհական ազնվականության ծագման» մասին և այլն:

* Նշված խնդիրը 4–5-րդ դարերում լուծելու էին կոչված նաև Ագաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի, Կորյունի, Փարպեցու պատմագրքերը:

[2] Նույն տեղում, էջ 83:

[3] *К. А. Мирумян.* Армянская политическая мысль: формирование и этапы развития. Е., 2021, с. 220.

նորդների և թագավորների հերոսական գործունեությունը, նրանց նվիրվածությունը հայրենիքի և հայրենակիցների պաշտպանության, տնտեսական բարգավաճման ու հոգևոր-մշակութային ծաղկման գործին: Այսպես. Հայկի և Բելի ճակատամարտի մասին ավանդազրույցը ներկայացնելիս Պատմահայրը հստակ կերպով ընդգծում է մեր նախահայր Հայկի կարևոր բարոյական հատկությունները՝ ազատասիրությունը, պատվախնդրությունը, քաջությունը, անձնազոհության դիմելու պատրաստակամությունը: Նա ցույց է տալիս, որ հայոց նախնիները որևէ կերպ չեն խուսափել սրով իրենց տարածքների սահմանները գծելու՝ հնագույն ժամանակներին բնորոշ գործելակերպից («քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է, այնքան էլ գրավում է»[4]), և հարկ եղած դեպքում անվարան ու համարձակ կերպով նետվել են մարտի:

Խոսելով Հայկյան Արամի վարած պատերազմների մասին և նկարագրելով նրան՝ Խորենացին սերունդների համար կերտում է հայրենիքին և նրա պաշտպանությանը նվիրված առաջնորդի վառ ու տպավորիչ կերպար. «Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով,... լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպե՛ս օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»[5]:

Մովսես Խորենացին հատկապես մեծ հիացմունքով և համակրանքով է գրում հայոց աշխարհակալ թագավոր Տիգրանի և նրա գործերի մասին[*]: Հետաքրքրական է, որ Պատմահայրն այս առնչությամբ, անշուշտ իր դարաշրջանի պատկերացումների համատեքստում, շեշտում է նաև պետությունը հզորացնելու[**], պատերազմներում հաղթելու կարևորագույն նախապայմանները՝ երկրի ղեկավարի անձնային բարոյակամային հատկությունները և առաջնորդությունը («Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց»), տնտեսության, մասնավորապես՝ առևտրի ու արհեստների զարգացումը («ոսկու և արծաթի, և՛ պատվական քարերի, և՛ զգեստների, և՛ զանազան գույների, և՛ գործվածքների՝ հարստություններ տղամարդկանց և կանանց համար՝ առհասարակ բազմացրեց»), զինուժի կազմակերպումն և սպառազինությամբ ապահովումը («Հետևակ

[4] Նույն տեղում, էջ 96:

[5] Նույն տեղում, էջ 107:

[*] Հայոց աշխարհակալ թագավոր Տիգրան Մեծի (Ք. Ա. մոտ 140–55 թթ.) հայտնի գործերը Խորենացին իր «Պատմության» որոշ տեղերում սխալմամբ վերագրել է Տիգրան Ա Երվանդյանին (Ք. Ա. մոտ 560–525 թթ.), որոշներն էլ՝ գոյություն չունեցող Արտաշես Ա-ին (այդ մասին տես *Ստ. Մալխասյան,* Ներածություն: *Մովսես Խորենացի,* Նշ. աշխ., էջ 34–35):

[**] Պետությունը հզորացնելը հասկացվում է նախևառաջ որպես օտարների լծից ազատում և օտար ազգերի հնազանդեցում. «մեզ, որ (օտարների) լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ» (*Մովսես Խորենացի,* Նշ. աշխ., էջ 111):

կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը պատվեցին վահաններով և երկաթե զգեստներով»), ինչպես նաև հոգեբանական պայքարի և ազդեցության («Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեցին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու») գործոնները: Տիգրան Մեծը, ըստ Խորենացու, այս գործոնները ապահովելու շնորհիվ «խաղաղություն և շենություն գցեց, բոլորին լիացրեց յուղով ու մեղրով»[6]:

Անշուշտ կարևոր տեղ է տրվում քաջությանը. «մեր երկրումն էլ… շատ սխրագործություններ են կատարվել»[7]: Սակայն ինքնին վերցրած քաջությունը նպատակ չէ, այլ միջոց է, որովհետև հայ ժողովուրդը, լինելով «փոքր ածու» և «թվով շատ սահմանափակ... և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված»[8], կարող է քաջությամբ գործելով թոթափել օտար լուծը և ունենալ իր ինքնիշխան թագավորությունը: Պատահական չէ, որ խոսելով Երվանդունիների Հայոց թագավորության ստեղծման մասին, Խորենացին չի կարողանում թաքցնել իր հրճվանքը. «Ահա այժմ ես զվարճանում եմ՝ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում»[9]:

Այսպիսով՝ Խորենացին իր երկում ցույց է տալիս, որ վաղնջական ժամանակներից սկսած հայ ժողովրդին, նրա առաջնորդներին հատուկ է եղել հայրենասիրությունը, այն է՝ ազատասիրությունը, օտարի լծի նկատմամբ անհանդուրժողականությունը, հայրենի երկրի սահմանները և հայրենակիցների անվտանգությունը քաջաբար պաշտպանելու պատրաստակամությունը, հայոց պետականության ամրապնդման, տնտեսական ու ռազմական հզորացման, մշակութային ծաղկման կարևորության գիտակցումը: Իսկ ինչպե՞ս էր վիճակը քրիստոնեություն ընդունելուց հետո, երբ տեղական մարդակերպ «հայ» աստվածություններին փոխարինեց ապազգային աներևույթ Աստվածը:

---

[6] Նույն տեղում, էջ 125:

[7] Նույն տեղում, էջ 83:

[8] Նույն տեղում, էջ 82:

[9] Նույն տեղում, էջ 121: Խորենացու այս մեծ հրճվանքը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ թեև նա ընդունում է Հայաստանում պարթև Արշակունիների թագավորության օրինավորությունը, սակայն նրանց համարում է եկվոր, ի տարբերություն Հայկազյան տոհմի թագավորներից, որոնց համարում է իրեն արյունակից և հարազատ, ինչը նրա հայրենասիրության և ազգասիրության վառ դրսևորումներից է, որը, մեր կարծիքով, պետք է բնորոշ լիներ իր ինքնիշխան թագավորությունը նորերս կորցրած հայ մտավորականությանը:

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հայ պատմիչները վկայում են, որ Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունումը թելադրվել է վերևից՝ ստիպողաբար[10]: Ընդսմին կար մի կարևոր հանգամանք, որը հայ աշխարհիկ տերերի և ժողովրդի համար խոչընդոտ էր քրիստոնեական պատվիրաններով ու վարքականոնով անվերապահորեն առաջնորդվելու համար: Խոսքը բուն քրիստոնեական ուսմունքի (հատկապես՝ Նոր Կտակարանի) այն հիմնադրույթների մասին է, որոնք քրիստոնյաներին պատվիրում են չհակադրվել թշնամական արարքներին, բռնությանը պատասխանել ոչ թե բռնությամբ, այլ սիրով և խոնարհությամբ[11]: Ինքնին հասկանալի է, որ հայրենիքը՝ հայրենի երկիրը, պետությունը և հայրենակիցներին, պաշտպանելու, ռազմական ուժը արդյունավետ կերպով գործադրելու դարավոր ավանդույթներ ունեցող հայությանը դժվար էր համակերպվել քրիստոնեական կրոնի քարոզած՝ թշնամիների նկատմամբ խոնարհության, ինչպես նաև տարածքային և էթնիկական սահմաններ չճանաչող նմանատիպ այլ գաղափարների հետ*, հատկապես՝ Հայաստանի հանդեպ հարևան գերտերությունների անթաքույց տարածքային հավակնությունների դրսևորման բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում: Հիրավի, «Ինքնության քրիստոնեական հարացույցում Ընօրրան, Հայրենիք, Ցեղ հասկացությունները կորցնում են իրենց վճռական նշանակությունը. Հոգու փրկության տեսանկյունից երկրային աշխարհը դիտվում է որպես ժամանակավոր հանգրվան: Աստծո առաջ բոլոր մարդիկ, անկախ ցեղից ու ազգությունից, դառնում են հավասար»[12]: Ուստի հայ պատմիչներից, եկեղեցական գործիչներից, փիլիսոփա մտածողներից լուրջ ջանքեր էին պահանջվում քրիստոնեական ուսմունքի վերոնշյալ հիմնադրույթները՝ հայրենի երկիրը օտար նվաճողներից պաշտպանելու արդարացվածության գաղափարի հետ համադրելու համար**: Առաջադրված

[10] Տես *Ագաթանգեղոս,* Հայոց պատմություն: Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի: Ե., 1983, էջ 437, 443: Տես նաև՝ *Մովսես Խորենացի,* Նշ. աշխ., էջ 259–261, *Փավստոս Բուզանդ,* Պատմություն Հայոց: Թարգմ., ներած. և ծանոթագր. Ստ. Մալխասյանցի: Ե., 1968, էջ 91:

[11] Տես «Աստվածաշունչ», Մատ. 5.38–48, Ղուկ. 6.27–36 (Սեր թշնամիների նկատմամբ):

[*] Այն, որ վերոնշյալ քրիստոնեական թեզը չէր կարող խնդրահարույց չլինել, հայոց պատմագրքերում դրևորվում է անուղղակի կերպով՝ այլ ազգերի, ցեղերի շրջանում քրիստոնեական քարոզչության և տարածման գործում ծագած խոչընդոտներին վերաբերող դրվագներում (տես, օրինակ, *Փավստոս Բուզանդ,* Նշ. աշխ, էջ 73–75):

[12] *Ս. Ա. Զաքարյան,* Հայոց ինքնության հիմնահարցեր: Ե., 2020, էջ 14–15:

[**] Քրիստոնեության՝ որպես համամարդկային արժեքներ դավանող ուսմունքի և ազգային հայրենասիրական գաղափարների մեկտեղումը Ագաթանգեղոսին հնարավորություն է տվել իր «Պատմության» առաջաբանում քրիստոնեություն ընդունած Տրդատ թագավորին նկարագրելու որպես և՛ հայրենասեր, և՛ քրիստոնյա առաջնորդի. «Իսկ երախտավոր

հայեցակարգի հիմքում դրված էին հետևյալ հիմնարար աշխարհայացքային սկզբունքները:

1) **Ցանկացած անհատ և ժողովուրդ, պարտավորված լինելով հնազանդություն ցուցաբերել իր աշխարհիկ տերերին[13], ազատ է իր հոգևոր կողմնորոշման՝ կրոնի և հավատի ընտրության մեջ, ուստի այդ հարցում ոտնձգությունների դեպքում դիմադրելը, չհնազանդվելը, հետևաբար՝ պայքարն ու պատերազմը քրիստոնեական հավատին նվիրվածության դրսևորում են:**

Պարսից զրադաշտական կրոնի՝ քրիստոնեական հավատի դեմ ուղղված ոտնձգությունների նկատմամբ գաղափարախոսական պայքարի դրսևորումներն առկա են ժամանակաշրջանի գրեթե բոլոր պատմագրքերում, սակայն եկեղեցական գործիչ, փիլիսոփա Եզնիկ Կողբացու (մոտ 380–450 թթ.) «Եղծ աղանդոց» կրոնափիլիսոփայական երկը առանձնահատուկ նշանակություն ուներ և «պարսկական տիրապետության, պարսիկների կրոնական ոտնձգությունների և քաղաքական բռնությունների դեմ հայերի պայքարի գաղափարախոսական հիմնավորումն էր»[14]: Իր երկում Կողբացին համակարգային քննադատության է ենթարկել և հերքել զրադաշտական կրոնի հիմնական դրույթները*՝ հաստատելով քրիստոնեական վարդապետության ճշմարիտությունը. «Եզնիկի գլխավոր նպատակն էր մերկացնել մազդեականության՝ որպես պարսկական զավթողականության գլխավոր զենքի գաղափարական և տրամաբանական սնանկությունը, նրա ներքին հակասականությունը, ապացուցել ազգային ինքնիշխանության վերականգնման համար ազգային-ազատագրական պայքարի օրինաչափ և անհրաժեշտ լինելը»[15]:

Քրիստոնեական հավատից հրաժարման պահանջով Հայաստանի դեմ ուղղված Պարսկաստանի զինված ոտնձգությունների դեմ ռազմական դիմադրության հերոսական դրսևորումներ էին Վարդանանց (450–451 թթ.) և Վահանանց (481–484 թթ.) ապստամբությունները:

2) **Քանի որ քրիստոնեական միաստվածության ուսմունքով չարը (այդ թվում՝ պատերազմը) սուբստանցիական հիմք չունի, ուստի դրա դեմ պայքարը (օտար նվաճողներին զենքով դիմադրելը) միանգամայն արդարացված է:**

Պարսից զրադաշտական կրոնը, ելնելով ոչ միայն բարու, այլև չարի

Տրդատը, կամովին դժվարին կյանք ընտրելով՝ ամենքին ցանկալի դարձավ, **Աստծու շնորհներով իր բնաշխարհիկ հայրենիքի որդին եղավ և հավերժական կյանքին մերձավոր դարձավ** (ընդգծումը մերն է,– *Ա. Մ.*)» (*Ագաթանգեղոս,* Նշ. աշխ., էջ 19):

[13] Տես «Աստվածաշունչ», Պողոս առաքյալի Թուղթը Հռոմեացիներին, 1:

[14] *Հ. Հ. Արևշատյան.* Формирование философской науки в Древней Армении (V–VI вв.). Е., 1973, с. 77.

* Կողբացին իր երկում քննադատում է ոչ միայն մազդեականությունը, այլև հեթանոսական բազմաստվածությունը, որոշ անտիկ հույն փիլիսոփայական դպրոցների ուսմունքները և Մարկիոնի գնոստիկական աղանդը:

[15] *Կ. Ա. Միրումյան,* Նշ. աշխ., էջ 191:

սուբստանցիական բնույթ ունենալու դրույթից (աշխարհն ստեղծել են երկու աստվածներ՝ բարի Որմիզդը և չար Ահրիմանը)՝ ընդունում էր չարիքի՝ ի սկզբանե գոյությունը: Հակադրվելով մազդեական երկվությանը (դուալիզմ), ինչպես նաև չարը անխուսափելի համարող ճակատագրապաշտությանը՝ քրիստոնեական ջատագովության և հայրաբանության առաջին հայ ներկայացուցիչներ Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտ Եզնիկ Կողբացին քրիստոնեական միաստվածության դիրքերից Աստծուն համարում էին միայն բարիքի արարիչ: Աշխարհում չարի գոյությունը նրանք դիտում էին որպես բանականությամբ, կամքի ազատությամբ և անձնիշխանությամբ օժտված մարդու սխալ, արատավոր, Աստծու կամքից շեղվող ընտրության հետևանք: Ուստի չարագործությունների և արհավիրքների համար պատասխանատվությունը դնում էին մարդկանց վրա և պնդում, որ կարելի է և պետք է պայքարել չարագործությունների դեմ: Ըստ այդմ՝ Եզնիկ Կողբացին պատերազմների ծագման այսպիսի բացատրություն է տալիս. «Պատերազմներն էլ մարդկանց ագահությունից են ծագում, այդպիսով սահմանների, գյուղերի ու քաղաքների հափշտակումներ և ունեցվածքների ավարառություն են լինում»[16]: Նա բառացիորեն անհեթեթ է համարում զավթիչի, ավազակի ոտնձգություններին չդիմադրելը և «ճակատագրին» հանձնվելը՝ համարելով, որ «զորքեր գումարելով և երկրից թշնամուն դուրս վռնդելով՝ ցույց են տալիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ՝ ավազակի բռնությամբ, որը գալով անհագաբար կոտորում է ժողովրդին, զրկում ունեցվածքից»[17]: Ակնհայտ է չարը կանխելու կամ արմատախիլ անելու նպատակով նրան դիմադրելու անհրաժեշտության կրոնափիլիսոփայական գաղափարի քաղաքական ֆոնը՝ օտարերկրյա նվաճողների չարամիտ ոտնձգություններին անհրաժեշտ է դիմադրել բոլոր միջոցներով, այդ թվում՝ ռազմական[18]:

3) Հոգևոր Հայաստանը՝ հայոց եկեղեցին, հայոց լեզուն, կրթությունը, գիտությունը, մշակույթը, ավանդույթները, ազգային ինքնությունը, այն անսասան հենքն է, որի արժեքային համակարգի վրա է հիմնվում ազգային պետությունը, իսկ պետականության կորստի դեպքում՝ հոգևոր Հայաստանը դառնում է այն հզոր ուժը, որի զորությամբ հնարավոր է դառնում հայոց պետականության վերականգնումը, և ազգային-ազատագրական պայքարը այդ պարագայում լիովին արդարացված է:

Քրիստոնեության ընդունումից անմիջապես հետո Տրդատ թագավորն ու Գրիգոր Լուսավորիչը մեծ եռանդով ձեռնամուխ են լինում մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության և կրթության գործի կազմակերպմանը: Դրան, սակայն, զգալիորեն խոչընդոտում էր այն հանգամանքը, որ դպրոցներում ուսուցումը կատարվում էր հունարենով և ասորերենով: Սասանյան

[16] *Եզնիկ Կողբացի,* Եղծ աղանդոց: Թարգմ. և ծանոթագր. Ա. Ա. Աբրահամյանի: Ե., 1994, էջ 67:

[17] Նույն տեղում, էջ 131–133:

[18] Տես *Ս. Ս. Արևշատյան, Կ. Ա. Միրումյան,* Հայոց փիլիսոփայության պատմություն. հին շրջան և վաղ միջնադար: Ե., 2007, էջ 106:

Պարսկաստանի և Արևելահռոմեական կայսրության միջև Հայաստանի բաժանումից հետո այս տերությունները, հետապնդելով որոշակի կրոնական, գաղափարախոսական, քաղաքական նպատակներ, խստացրին նաև իրենց լեզվական քաղաքականությունը. «Հայաստանի պարսկական մասում արգելվեց հունարենը, որը Հայ եկեղեցու, ուսումնակրթական համակարգի, մշակույթի, ներքին ու արտաքին հարաբերությունների պաշտոնական լեզուն էր, իսկ հռոմեական մասում՝ ասորերենի ու պարսկերենի գործածումը, որոնք համանման գործառույթներ էին կատարում»[19]: Հայոց աշխարհիկ և հոգևոր առաջնորդները, ճիշտ կողմնորոշվելով ստեղծված աշխարհաքաղաքական բարդ պայմաններում, որոշում ընդունեցին Հայ եկեղեցու պաշտոնական լեզուն դարձնել խոսակցական հայերենը: Նրանք ձեռնարկեցին նաև հայերեն գրերի ստեղծման ազգաշահ նախագիծը, որը պսակվեց մեծ հաջողությամբ: Մեսրոպ Մաշտոցը, որը «կրթվել էր հելլենական դպրությամբ», «տեղյակ և հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին», «հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը»[20], նախաձեռնեց ու Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ ու գործուն աջակցությամբ հաջողությամբ իրագործեց հայոց գրերի ստեղծման (405 թ.) կարևոր հանձնառությունը, որով սկիզբ դրվեց մեր հայատառ գրավոր մշակույթին: Հայ գրերի գյուտից անմիջապես հետո Հայաստանում սկիզբ առավ գրական-թարգմանական և գիտակրթական հուժկու շարժում[21]: Ինքնին նշանակալից այս երևույթի շնորհիվ հայ ժողովուրդը, «հաղթահարելով օտարի կեղեքումներն ու բռնաճնշումները, ծանր քաղաքական ու տնտեսական լուծը, կոտորածներն ու կողոպուտը, ավերածություններն ու ասպատակությունները, կարողացավ գոյատևել մինչև այսօր և անգամ վերականգնել իր անկախ ազգային պետականությունը՝ պահպանելով իր ինքնությունը՝ իր ազգային «Ես»-ը»[22]:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅԱՆ ՄՂՈՂ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒԺ

Սույն հայեցակարգային սկզբունքներով առաջնորդվող հայ աշխարհիկ և հոգևոր տերերին հաջողվում է Քրիստոսի նկատմամբ հավատը վերածել պատերազմներում հայրենասիրության և անձնազոհության մղող հզոր գաղափարահոգեբանական ուժի: Հայկական «ինքնության քրիստոնեական հարացույցի»[23] ձևավորման ընթացքում հայոց եկեղեցին ձգտում էր հայրենիքի

[19] Նույն տեղում, էջ 84:

[20] Տես *Կորյուն,* Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի: Աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի: Ե., 1994, էջ 39:

[21] Տես *Ս. Ս. Արևշատյան,* Նշ. աշխ., էջ 34–44:

[22] *Դ. Ս. Չիլինգարյան,* Ազգը, ազգային ինքնությունը և լեզուն՝ որպես հոգևոր անվտանգության առանցքային օբյեկտներ. եռալեզու պաշտպանական-անվտանգային բառարանը՝ որպես լեզվի բնագավառում համատեղայնացման օրինակ: «ՀԲ», 2018, հմ. 3:

[23] Այս մասին հանգամանորեն տես *Ս. Ա. Զաքարյան,* Հայոց ինքնության քրիստո-

պաշտպանության գործում հաստատելու իր հույժ կարևոր՝ հոգևոր-գաղափարախոսական, բարոյահոգեբանական դերը: 4–5-րդ դդ. պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս երևան հանելու այդ գործընթացի մի շարք էական բաղադրիչներ:

1. Քրիստոնեական աշխարհընկալման շրջանակներում «հայրենիք» հասկացության մեջ «ներառվեցին» նաև քրիստոնեական հավատն ու եկեղեցին, եկեղեցական մասունքներն ու ավանդությունները և ըստ այդմ՝ նոր շեշտադրումներ ստացավ նաև հայրենասիրության մասին պատկերացումը:

Այսպես. երբ պարսից Շապուհ թագավորը հերթական անգամ ներխուժում է Հայաստան, պարսից զորքի դեմ պատերազմելու համար Արշակ թագավորն ու Վասակ սպարապետը հավաքում են իրենց «ընտիր պատերազմողների» բանակը, որոնց հայրենասիրությունը հայ պատմիչներից Բուզանդը ներկայացնում է այսպես. «միաբան, միասիրտ, հոժարակամ գնում էին պատերազմի, ***որպեսզի հասնեն ու պատերազմեն իրենց կանանց ու որդիների համար, իրենց կյանքը զոհեն երկրի համար, իրենց բնակած տեղերի համար, կռվեն իրենց եկեղեցիների համար, սուրբ եկեղեցիների սպասավորների համար, իրենց հավատի ու աստծու համար, իրենց բնիկ տերերի՝ Արշակունիների համար*** (ընդգծումը մերն է – *Ա. Մ.*)»[24]: Ակնհայտ է հայրենասիրության ըմբռնման այսպես ասած ավանդական պատկերացմանը (պետություն, հայրենի երկիր և հող, հայրենակիցների համար պատերազմ մղելու պատրաստակամություն) նոր՝ քրիստոնեական հավատի, եկեղեցու, եկեղեցու սպասավորների պաշտպանության շեշտադրումների հավելումը:

Հայրենասիրության ընկալման այս նոր շեշտադրումները վառ կերպով արտահայտված են ժամանակի բոլոր հայ պատմիչների գրքերում, բայց հատկապես Եղիշեի (410–475 թթ.) երկում՝ Ավարայրի ճակատամարտի նախօրեին սպարապետ Վարդան Մամիկոնյանի և Ղևոնդ երեցի մարտակոչերում[25]:

2. Քրիստոնեական ուսմունքի համատեքստում ջերմեռանդ հավատը, աստվածային պատվիրաններին, եկեղեցական արարողակարգին, քրիստոնեական վարքականոնին հետևելը համարվում են արտաքին թշնամիների դեմ մղվող պատերազմներում հաղթելու, խաղաղության մեջ ապրելու կարևոր նախապայմաններ, և ընդհակառակը՝ հավատի տկարությունը և քրիստոնյային ոչ վայել, մեղսալից վարքը՝ թշնամությունների, անհաջողությունների, պատերազմներում պարտությունների պատճառներ:

Այսպես. նկարագրելով կաթողիկոս Շահակի* ժամանակ ժողովրդի հո-

նեական հարացույցը (ձևավորման ու կայացման փուլ): «Հայոց ինքնության հարցեր»: Գիտական հոդվածների ժողովածու: Ե., 2014, պրակ 2, էջ 6–24:

[24] *Դ. Ս. Չիլինգարյան,* Նշ. աշխ., էջ 191:

[25] Տես *Եղիշե,* Վարդանի և հայոց պատերազմի մասին: Ե., 1994, էջ 74 – 82:

* Շահակ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս (351–352), Աղբիանոսյանների տոհմից: Մեծ Հայքում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո քրմի որդի Աղբիանոսը

գևոր վիճակը, երբ «որոնց որ նա հովվում էր, չէին լսում նրա ճշմարիտ խրատներին, այլ հանդիմանվելիս էլ բացեիբաց ու համարձակ գործում էին իրենց մեղքերը… մոռանալով (Տիրոջը) և նրա պատվիրանները», Բուզանդը համարում է, որ այդ պատճառով Աստված բարկանում և երես է թեքում նրանցից: Ավելին. «Տերը գրգռություն առաջացրեց նրանց բոլոր սահմաններում, զորացրեց նրանց թշնամիներին, և ոչ մեկը ուրիշ ազգերի թագավորներից նրանց բարեկամ չէր, այլ բոլորը թշնամի էին»: Սրան պատմիչը հակադրում է երկրի վիճակը Տրդատ թագավորի օրոք՝ Գրիգոր Լուսավորչի կաթողիկոս դառնալուց հետո. «Տրդատի թագավորության ժամանակից ի վեր՝ Տիրոջը ճանաչելուց հետո, (Աստված) խաղաղություն պարգևեց, նրանց շրջապատող թշնամիներին լռեցրեց, նրանց սահմաններից պատերազմները հեռացրեց, և ոչ ոքի հետ նրանք խռովության կամ թշնամության գործ չունեցան ու ապրում էին կատարյալ խաղաղության մեջ»[26]:

3. Վերամիաստավորվում և քրիստոնեական դավանաբանական հիմնավորումներ են ստանում նաև հայրենասիրությանը ուղղակիորեն առնչվող այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են, մի կողմից, միաբանությունը, մյուս կողմից՝ երկպառակությունն ու դավաճանությունը:

Հայտնի է, որ միջնադարյան ավատատիրական հասարակարգում հայոց ավատատերերի (նախարարների) «կենտրոնախույս» ձգտումները, թագավորական «կենտրոնաձիգ» իշխանությանը բացահայտ և ոչ բացահայտ կերպով հակադրվելը իսկական չարիք էին դարձել հայոց թագավորական իշխանության, հետևաբար պետականության պահպանման համար: Նրանց պառակտիչ գործունեությունը հովանավորում և խթանում էին հարևան տերությունների՝ Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության առաջնորդները, որոնք հայոց թագավորի ու նախարարների անմիաբանությունը հմտորեն օգտագործում էին Հայաստանը թուլացնելու և նվաճելու համար: Հայ վաղմիջնադարյան մտածողները լիովին գիտակցում էին հայոց պետականությանն սպառնացող այդ վտանգը և համարում էին, որ փրկությունը, ի հակադրություն երկպառակության, հայ նախարարների և ժողովրդի համախմբումն է հայոց թագավորական իշխանության շուրջ, նրանց բոլորի միաբանությունը: Այն կարևոր նախապայման է հայոց թագավորության (պետության) պահպանման համար և ունի նաև աստվածային աջակցություն, քանի որ անմիջականորեն բխում է քրիստոնեական ուսմունքից, որը պահանջում էր հնազանդվել և հավատարմորեն ծառայել աշխարհիկ տերերին:

Ղազար Փարպեցին (442–510 թթ.) իր «Հայոց պատմության» առաջա-

կարգվեց եպիսկոպոս: Աղբիանոսյանները, լինելով հեղինակավոր հոգևորական տոհմ, 4–5-րդ դդ. եպիսկոպոսապետության համար մղվող պայքարում Գրիգոր Լուսավորչի տոհմի գլխավոր հակառակորդներն էին և այդ պայքարում երբեմն գերակշռություն էին ստանում:

[26] Նույն տեղում, էջ 102–103: Որ հավատն ու ջերմեռանդ աղոթքը օգնում են հաղթելու պատերազմներում (տես նույն տեղում, էջ 76, 79 և այլն):

բանում գրում է, որ բազում դարերի ընթացքում Հայոց աշխարհը երբեմն ապրել է խաղաղության, իսկ երբեմն էլ խառնակ, պատերազմական իրավիճակներում՝ ըստ այնմ, թե հայերը գործում էին «միմյանց հետ միաբանությա՞մբ», թե «իրարից բաժանող երկպառակությամբ»: Ընդ որում, «ովքեր միաբանվում էին՝ տեսնում էին Աստծու օգնությունը անձերին և աշխարհին, իսկ բաժանվելիս և պառակտվելիս՝ (տեսնում էին) անձերի և աշխարհի վնասն ու կորուստը»[27]:

Այսպես. չնայած Արշակունի գահակալների հոռի վարքագծին՝ Փարպեցին համարում է, որ նրանք, այնուամենայնիվ, Հայաստանի բնիկ տերերն են, և պետք է ի շահ հայոց երկրի ու քրիստոնեական հավատի ոչ թե բողոքպարսավանքներով ներկայանան պարսից արքաներին, ինչպես սովորաբար վարվում էին հայ նախարարները, այլ ենթարկվեն ու պաշտպանեն հայոց արքաներին: Երբ Արտաշես Գ (Արտաշիր) դեմ ըմբոստացած հայ նախարարները դիմում են Սահակ կաթողիկոսին՝ խնդրելով պարսից արքայի առջև հանդես գալ հայոց թագավորի ամբաստանությամբ, կաթողիկոսն ընկնում է ծանր մտորումների և վշտի մեջ. նա, մի կողմից, գիտեր, որ հայոց թագավորի՝ քրիստոնեական վարքուբարքի կանոններին հակասող անբարո վարքի մասին նախարարների ասածները ճշմարիտ են, բայց, մյուս կողմից, գիտեր նաև, թե ինչ հետևանք կունենա այս ամբաստանությունը, և հրաժարվում է: Իր այս դիրքորոշումը նա հիմնավորում է այսպիսի դավանաբանական փաստարկով (հղելով Պողոս առաքյալին և Գրիգոր Լուսավորչին). երբ փոքր-ինչ վշտանում է մարմնի մի անդամը, բոլոր անդամները վշտանում են նրա հետ: Եվ եթե անդամը փառավորվում է, բոլոր անդամներն ուրախանում են նրա հետ: Եվ նա խորհուրդ է տալիս նախարարներին՝ ողորմություն խնդրել մեղավոր անդամի համար և չմատնել անօրենների, որ իրենց «հավատի սուրբ խորհուրդը» ծաղրեն: Հայոց կաթողիկոսը հաստատապես չի կամենում «մատնիչ լինել մեր ճշմարիտ հավատի և անհավատների անարգանքին հանձնել իր հոտի մոլորյալ ոչխարին»[28]:

Եվ իրոք, իրադարձությունների հետագա զարգացումը ցույց է տալիս, որ նա միանգամայն իրավացի էր. պարսից արքան, օգտվելով հայոց թագավորությունը վերացնելու հարմար առիթից, հայ նախարարների դժգոհությունների հիման վրա կանչում է Արտաշեսին Տիզբոն և գահազրկում, իսկ Հայաստանի պարսկական մասը վերածում մարզպանության:

Հայ միջնադարյան մտածողներն անհանդուրժողական էին դավաճանների և դավաճանության նկատմամբ: Այսպես. Եղիշեի պատկերացմամբ դավաճանությունը դրսևորվում է հայրենիքը պաշտպանելու գործում «նենգավոր երկմտություն» սերմանելու, միաբանությունը քանդելու և երկպառակություն հրահրելու, «անձնասիրությամբ» առաջնորդվելու, «Հայոց աշխարհը խռովելու ու շփոթելու», հայերի դաշնակիցներին հիասթափեցնելու և

[27] Տես *Ղազար Փարպեցի,* Պատմութիւն Հայոց: «Մատենագիրք հայոց», Բ հատոր, Ե դար: Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2203:

[28] Տես նույն տեղում, էջ 2217–2219, նաև՝ *Մովսես Խորենացի,* Նշ. աշխ., էջ 341–342:

հեռու վանելու, նրանց հետ ունեցած պայմանավորվածությունների նկատմամբ կասկած հարուցելու, թշնամական ուժերի հետ համագործակցելու, հակառակորդին մեր ռազմական ուժի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու, հայոց զորքը «քանդել-երկպառակելու», ինչպես նաև քրիստոնեական հավատն ուրանալու՝ Քրիստոսի սիրուց հեռանալու ուղղությամբ հետևողական քայլերի ձևով[29]: Մեր պատմիչները, որպես կանոն, դավաճաններին ոչ միայն արժանացնում են խիստ բացասական, արհամարհական վերաբերմունքի, այլև նրանց վերապահում են անփառունակ, նվաստ մահ՝ «որպեսզի իրավացի մահով հոգիների անիրավ մահը խայտառակվի»[30]:

4. Քրիստոնեական դավանաբանության հիման վրա վերահիմնավորվում է մահն ընդհանրապես, հանուն հայրենի երկրի և քրիստոնեական հավատի (որոնք, ինչպես նշվեց, դիտվում են որպես մեկ միասնական ամբողջություն) անձնազոհությունը՝ մասնավորապես:

Եղիշեի «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» հանրահայտ ասույթի բովանդակությունը բացահայտվում է նրա հայտնի երկի բազմաթիվ դրվագներում: Այսպես. հավաքված զորքի առաջ ելույթ ունենալով՝ Ղևոնդ երեցն ասում է, որ Հիսուս Քրիստոսն «իր մահով խափանեց մահի իշխանությունը» և եզրակացնում՝ «Եթե ուրեմն մահը մեռնում է մահով, չվախենանք Քրիստոսին մահակից լինել, որովհետև ում հետ որ մեռնենք մենք՝ նրա հետ էլ կկենդանանանք»: Քրիստոնեական դավանաբանության այն կարևոր հիմնադրույթը, համաձայն որի՝ Հիսուսը, մարդկային կերպարանք ստանալով, բազում չարչարանքներ կրեց, դատապարտվեց մահվան և իր մահվամբ իր անձը զոհեց մարդկանց մեղքերի քավության համար՝ նրանց ազատելով չափազանց ծանր դատապարտությունից, քրիստոնյաներին պարտավորեցնում է իրենց անձը զոհել Տիրոջ «անմահ զորության» համար[31]: Ըստ այդմ հոգևորականը կոչ է անում հայրենիքի և հավատի պաշտպաններին. «Այս գիտենալով, եղբայրնե՛ր, չթուլանանք ու չվհատվենք, այլ պինդ սրտով և հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են կացել-գալիս են մեզ վրա: Մեր հույսը կրկնակի է երևում մեզ. եթե մեռնենք՝ կապրենք և եթե մեռցնենք՝ միևնույն կյանքն է կանգնած մեր առաջ»[32]: Փաստորեն, եթե իրականում մահ չկա, չկա

[29] Տես *Եղիշե,* Նշ. աշխ., էջ 66–71:

[30] *Մովսես Խորենացի,* Նշ. աշխ., էջ 335: Թեև Պատմահայրը այստեղ նկատի ունի «պղծագործ բորբորիտոնների» աղանդը, սակայն այս դրույթի բազմաթիվ այլ դրսևորումները տեսանելի են հայոց պատմագրքերի ամենատարբեր դրվագներում (տես *Փավստոս Բուզանդ,* Նշ. աշխ., էջ 78–79 («անօրեն» Բզնունյաց Դատաբենի քարկոծմամբ մահն ու տոհմի ոչնչացումը), էջ 225 («պիղծ, տնօրեն, դժնյա» Վահան Մամիկոնյանի սպանությունը որդու՝ Սամվելի ձեռքով), էջ 291 («չարագործ» Մերուժան Արծրունու մահն ու գլխատվելը), *Եղիշե,* Նշ. աշխ., էջ 99–100 («ուրացող» Վասակ Սյունու «հեղձամղձուկ» մահը) և այլն):

[31] Տես *Եղիշե,* Նշ. աշխ., էջ 78–79:

[32] Նույն տեղում, էջ 80:

նաև վախ մահվան հանդեպ, և «գիտակցված մահը», երբ մարդը գիտի, թե հանուն ինչի է զոհաբերում իր կյանքը, մարդուն առաջնորդում է դեպի անմահություն:

Այս համատեքստում վերանայվում են նաև պատկերացումները, պատերազմներում հայրենիքի հայրենասեր պաշտպանների գործած հերոսության և անձնազոհության, ինչպես նաև զոհվածների հիշատակի նկատմամբ:

Այսպես. հայերի և պարսիկների միջև հերթական պատերազմի ժամանակ (337 թ.) երկու կողմից շատ զոհեր են լինում, «մեծամեծ ավագանիներ կոտորվում, ոչնչանում են», պատերազմում զոհվում է նաև Հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանը: Ժողովուրդը դառնացած սգում է իր հերոսների մահը, ողբում են նաև Խոսրով թագավորը և ամբողջ հայոց զորքը՝ «գնացածների տառապանքները մնացածներին համարելով»: Նրանց սփոփելու նպատակով Վրթանես կաթողիկոսը հավաքվածներին դիմում է այսպիսի խոսքով. «Մխիթարվեցե՛ք Քրիստոսով, որովհետև նրանք, որ մեռան, *մեր աշխարհի, եկեղեցիների և աստվածատուր հավատի համար (մեռան)…* (ընդգծումը մերն է,– *Ա. Մ.*)»[33]: Ու քանի որ հայրենիքի պաշտպանները «իրենց անձերը զոհեցին աստվածային ճշմարտության համար», Վրթանես կաթողիկոսը համարում է, որ նրանք պետք է արժանանան մեծագույն պատվի և մեծարանքի, նրանց հիշատակն ու բարի անունը ժողովրդի սրտում վառ պահելու համար նա առաջարկում է. «մշտական կարգ սահմանենք ամբողջ մեր աշխարհում, որ ամեն ոք անխափան կատարի սրանց բարի հիշատակը՝ ինչպես Քրիստոսի նահատակների: … որ Աստված սրանցով մեզ հետ հաշտ լինի ու այսուհետև խաղաղություն շնորհի»[34]: Այս որոշմամբ ոչ միայն փարատվում են ողբն ու սուգը զոհվածների հարազատների համար, այլև որպես հոգևոր մխիթարություն և բարոյական փոխհատուցում՝ հայրենիքի համար մղված պատերազմում զոհվածները մեծարվում են հավատի համար նահատակներին համահավասար*. Աստծու սեղանի առաջ պատարագի ժամանակ սրբերի անունները հիշատակելիս բարձրաձայնվում են նաև նրանց անունները[35]:

Այսպիսով՝ քրիստոնեական եկեղեցին հանուն հայրենի երկրի և քրիս-

[33] *Փավստոս Բուզանդ,* Նշ. աշխ, էջ 85:

[34] Նույն տեղում, էջ 86:

* Հայ եկեղեցին Վրթանես կաթողիկոսի սահմանած այս կարգով հետագայում Վարդան զորավարին և նրա հետ Ավարայրի ճակատամարտում իրենց կյանքը նվիրաբերած հայորդիներին նույնպես դասեց սրբերի շարքը:

[35] Տես *Ագաթանգեղոս,* Նշ. աշխ., էջ 85–86: Հայոց Մանվել սպարապետը մահից առաջ իր ունեցվածքն ու գործը որդուն ժառանգելիս՝ նրան կտակում է նաև այս կարևոր պատգամը. «Ուրախությամբ հանձն առ մահ երկրի համար, ինչպես և քո քաջ նախնիները, որովհետև,– ասաց,– դա արդար և աստծուն ընդունելի գործ է, և երբ այդպես վարվեք, աստված ձեզ անտես չի անի: Երկրի վրա քաջության անուն թողեք և ձեր արդարությունը երկնքին նվիրեցեք: Մահից ամենևին մի՛ վախենաք, այլ հույս դրեք նրա վրա, որ ամեն ինչ ստեղծեց ու հաստատեց» (*Փավստոս Բուզանդ,* Նշ. աշխ., էջ 293):

տոնական հավատի մղվող պատերազմում հայրենիքի պաշպանների ցուցաբերած անձնազոհությունը արժանացնում է ամենաբարձր բարոյական գնահատականին:

Եվ այսպես. «Քրիստոնեության ընդունումը նշմարեց հայ ժողովրդի և պետականության հետագա զարգացման ուղիները, հոգևոր կյանքի, մշակույթի, մտածողության և աշխարհընկալման ուղենիշներն ու չափանիշները, որոնք թեև դժվարությամբ, բայց հետզհետե թափանցում էին ազգային գիտակցության, ապրելակերպի, կենցաղի մեջ: Աստիճանաբար այն վերածվեց ազգային գաղափարախոսության, հզոր հոգեմտավոր զենքի՝ արտաքին գաղափարաքաղաքական նկրտումների կասեցման, ազգի միավորման և համախմբման դժվարին գործում»[36]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

4–5-րդ դարերում Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունման, գրերի գյուտի, պետության անկման և այլ բեկումնային իրադարձությունների հետևանքով ազգային գիտակցության մեջ վերաիմաստավորվում է նաև հայրենասիրության առավել ցայտուն դրսևորումներից մեկի՝ հայրենիքի զինված պաշտպանության գաղափարը: Հայրենասիրության՝ որպես հայրենի երկրի սահմանները, թագավորական իշխանությունը և հայրենակիցների անվտանգությունը քաջաբար և անձնվիրաբար պաշտպանելու պատրաստակամության ընկալմանը ավելանում են քրիստոնեական հավատին և Հայ առաքելական եկեղեցուն նվիրվածության ու հավատարմության նոր շեշտադրումներ: Դրանով իսկ քրիստոնեական հավատը դառնում է այն հզոր հոգևոր-գաղափարախոսական, բարոյահոգեբանական ուժը, որը պատերազմների ժամանակ հայրենիքի պաշտպաններին մղում էր սխրագործությունների և անձնազոհության: Քրիստոնեության համամարդկային արժեքներին նվիրվածության, թշնամուն սիրելու, նրան ենթարկվելու և չհակադրվելու քարոզը հայ հասարակական գիտակցության մեջ նահանջում կամ անտեսվում էր, երբ վտանգվում էր հայրենիքը: Երկրի և հավատի համար օրհասական պահերին հայրենիքի զինված պաշտպանության գործն արդարացվում և սրբացվում է, այն ստանում է քրիստոնեական եկեղեցու քարոզած բոլոր մնացած բարոյական պարտավորությունների նկատմամբ բացարձակ առաջնահերթություն և գերակայություն:

[36] *Ս. Ս. Արևշատյան, Կ. Ա. Միրումյան,* Նշ. աշխ., էջ 70:

ДУХОВНАЯ БЕЗОПАСНОСТЬ

ПОНИМАНИЕ ИДЕИ ВООРУЖЕННОЙ ЗАЩИТЫ ОТЕЧЕСТВА В РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ (4–5 ВВ.) АРМЕНИИ: ФИЛОСОФСКИЙ ПОДХОД

А. А. МИНАСЯН, подполковник запаса, кандидат философских наук, доцент, начальник Центра исследований военно-гуманитарных наук НИУО МО РА

РЕЗЮМЕ

Анализ армянских письменных источников раннего средневековья свидетельствует о том, что с принятием христианства как государственной религии в национальном сознании происходят определенные изменения в восприятии ответственности за вооруженную защиту Отечества. Если раньше эта обязанность воспринималась в плане храброй и самоотверженной защиты пределов родной страны, царской власти и безопасности соотечественников, то теперь к этому добавляется обязанность по защите христианской веры, духовных и материальных ценностей Армянской Апостольской Церкви и жизни ее служителей. При этом установки христианского вероучения на вненациональные общечеловеческие ценности, абстрагированные от этнической принадлежности христианина, на любовь к врагу, всепрощение и непротивление насилию вступают в противоречие с необходимостью с оружием в руках защищать Родину.

Попытка примирения этих двух диаметрально противоположных тезисов потребовала от светских и духовных лидеров проявления значительного теоретического и практического искусства. Однако им удалось решить эту проблему путем включения в понятие Родины и институтов христианской религии. Теперь уже защитники Отечества сражались не только за независимость страны, но и в защиту веры, за сохранность духовных и материальных ценностей Армянской Апостольской Церкви и жизни ее служителей. При этом в особо тяжелых условиях с оружием в руках рядом с воинами и ополченцами сражались и сами священнослужители.

SPIRITUAL SECURITY

COMPREHENDING THE IDEA OF ARMED DEFENSE OF THE MOTHERLAND IN THE EARLY MEDIEVAL (THE 4–5TH CENTURIES) ARMENIA: PHILOSOPHICAL APPROACH

A. A. MINASYAN, Colonel (Ret.), PhD in Philosophy, Associate Professor, Head, Center for Research in Military-Humanitarian Sciences, INSS, MOD, RA

SUMMARY

The analysis of the early medieval written sources proves that on adopting Christianity as the state religion certain changes as to the perception of responsibility of the Motherland's armed protection took place in the national consciousness. If previously that responsibility had been viewed at as undaunted and selfless protection of the native country's borders, royal power, as well as countrymen's safety, then now the duty of protecting the Christian creed, spiritual and material values of the Armenian Apostolic Church and its priests' lives added to it. Notably, the provisions of the Christian creed regarding the transnational universal values, detached from ethnic belonging of a Christian, the love for enemies, the forgiveness and nonviolent resistance collide with the necessity to defend the Motherland with arms.

The attempt of reconciling those two diametrically opposite theses required implementation of significant theoretical and practical skillfulness on the secular and clerical leaders' part. However, they succeeded in solving this problem through including the institutions of the Christian religion into the notion of the Motherland. Now the Motherland defenders fought not only for the independence of their country, but also to protect the creed, for the preservation of spiritual and material values of the Armenian Apostolic Church and its churchmen. Moreover, in the particularly difficult conditions the churchmen themselves fought with arms in hands side by side with warriors and militia.